Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական ինստիտուտ ՊՈԱԿ և ՀՀ "Արդարադատության ակադեմիա" ՊՈԱԿ								

1.2. Տրանսֆերտներ

Ծրագրային դասիչը 1120 ԾՏ01	*Անվանումը՝* Դեղորայքով ապահովում կալանավայրերում պահվող ազատազրկվածներին *Նկարագրություն* Դեղորայքային և վիրակապական նյութերի ձեռք բերում կալանավայրերում պահվող ազատազրկված անձանց տրամադրելու նպատակով								
Շահառուների քանակը	պոտենցիալ շահառուների քանակ				4950	0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	43,000.0
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը					Ըստ դիմելիու	0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները Կալանավայրերում պահվող ազատազրկվածներ									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1120 Քրեակատարողական ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հանցագործությունների դեպքերի կրճատում									
Ծրագրային դասիչը 1149 ԾՏ01	*Անվանումը՝* Մասնագիտական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ								

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկվելու նպատակով անձանց վերապատրաստման ընթացքում տրվող կրթաթոշակ								
Շահառուների քանակը	Կրթաթոշակ ստացող ունկնդիրների թիվը				30	0.0	0.0	0.0	0.0
Գումարը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	33,820.1
Տրանսֆերտի վճարման հաճախականությունը						0.0	0.0	0.0	0.0
Շահառուների ընտրության չափանիշները «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ում ուսուցում ստացող ունկնդիրներ									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1149 Դատավորների, դատական ծառայողների, դատական կարգադրիչների վերապատրաստման ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Դատական համակարգի արդյունավետության բարձրացում									

1.5. Այլ կառավարչական հիմնարկների կարողությունների զարգացում

1.5.1. Այլ պետական կառավարչական հիմնարկի կարողությունների զարգացում

Ծրագրային դասիչը 1080 ԿՊ01	*Անվանումը՝* Մեքենաներ և սարքավորումներ *Նկարագրություն* Վեբինարներ (համացանցի) միջոցով անցկացվող սեմինարների, աուդիոկոնֆերանսների և հեռահար ուսուցման դասընթացների համար տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումների ձեռքբերում								
Քանակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Տվյալ տարվա պետական բյուջեից ակտիվի ձեռք բերման, կառուցման կամ հիմնանորոգման վրա կատարվող ծախսերը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	18,723.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ակտիվի ծառայության կանխատեսվող ժամկետը	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ակտիվի ընդհանուր արժեքը (հազար դրամ)						0.0	0.0	0.0	0.0
Տվյալ բյուջետային տարվան նախորդող բյուջետային տարիների ընթացքում ակտիվի վրա կատարված ծախսերը (հազար դրամ)						0.0	0.0	0.0	0.0
Ազդեցությունը կազմակերպության կարողությունների զարգացման վրա, մասնավորապես՝									
Քանակական, որակական, ժամկետայնության և այլ չափորոշիչների փոփոխության վրա	Ակիվներն անհրաժեշտ են դատական համակարգի ծրագրերի քանակական, որակական և ժամկետայնության ցուցանիշների ապահովման համար								
Ծախսային արդյունավետության բարելավման վրա									
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1080 Դատական ծառայություններ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Դատաիրավական համակարգի գործունեության բարելավում									

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

ՄԱՍ Ա: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. <u>Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին ծրագրի ռազմավարական նպատակները.</u>

2014 թվականի կտրվածքով ՓՄՁ-ի ոլորտում ՀՀ էկոնոմիկայի նախարարության ռազմավարական նպատակներն են՝

1) պետական ուղղակի աջակցության գործիքների միջոցով խթանել երկրում ՓՄՁ-ի զարգացմանը.

2) ՓՄՁ-ի զարգացման ճանապարհով նպաստել երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամաչափությունների հաղթահարմանը.

3) ՓՄՁ-ի զարգացման միջոցով նպաստել երկրի տնտեսության դիվերսիֆիկացմանը և ապահովել զբաղվածության և ինքնազբաղվածության մակարդակի բարձրացում.

4) ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

ՓՄՁ-ի ոլորտի ռազմավարական նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է՝

1) գործարար միջավայրի բարելավմանը զուգընթաց գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու, ինչպես նաև նրանց ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում, նախապատվություն տալով ՀՀ մարզերին՝ հաշվի առնելով ՀՀ տարածքային զարգացման առանձնահատկությունները.

2) կանանց ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնում.

3) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության առկա գործիքների (ֆինանսական, խորհրդատվական և այլն) կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.

4) ՓՄՁ-ի սուբյեկտներին պետական աջակցության նոր գործիքների ներդրում, մասնավորապես տեղական տնտեսական զարգացում և արդյունաբերական համակարգերի ձևավորում.

5) ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության միջազգայնացում, մասնավորապես ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության գ ործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրում.

6) ՓՄՁ-ի սուբյեկտների նորարարական նախաձեռնությունների խթանում, մասնավորապես արտահանմանն ուղղված ՀՀ արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո իրականացվող միջոցառումների շրջանակում նորարարությունն ե ր ի ներդրման նպատակով դրամաշնորհների տրամադրման միջոցով.

7) հեռանկարային և արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ցուցաբերում.

8) գիտատար արտադրության իրականացման հնարավորությունների բացահայտում և այդ ուղղությամբ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների կարողությունների առաջնահերթ զարգացում.

9) ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրի իրականացման շրջանակներում ավելի շատ ՓՄՁ-ի սուբյեկտների ներգ րավում և նրանց ցուցաբերվող պետական աջակցության շրջանակների ընդլայնում.

10) ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող ենթակառուցվածքների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացում:

ՓՄՁ-ի ոլորտում ՀՀ էկոնոմիկայի նախարարության ռազմավարական նպատակները համահունչ և փոխկապակցված են ՀՀ կառավարության գործունեության ծրագրային միջոցառումների ցանկում ընդգրկված «Աջակցություն փոքր և միջին ձե ռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագրի նպատակային ուղղությունների հետ, որոնք բխում են ՀՀ կառավարության գործունեության ընդհանուր նպատակներից և կրում են շարունակական ու կայուն բնույթ:

2. <u>Զբոսաշրջության աջակցության ծառայություններ ծրագրի ռազմավարական նպատակները.</u>

2014 թվականին զբոսաշրջության ոլորտի ռազմավարական նպատակներն են՝

1) ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորման և միջազգային շուկայում ներկայացման ու ամրապնդման ապահովումը.

2) Հայաստանի միջազգային ինտեգրմանը նպաստելը:

Ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների արդյունքում՝

- կապահովվի Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի կատարելագործումը և ամրապնդումը համաշխարհային զբոսաշրջային շուկայում,
- նոր մակարդակի կբարձրանա միջազգային համագործակցությունը.
- կապահովվի Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թվի աճի տեմպը՝ մոտ 10-12 տոկոս և համաշխարհային տնտեսության զարգացման ներկա պայմաններում՝ 2014 թվականին ապահովելով 920000 ավել զբոսաշրջային այցելություններ,
- կապահովվի զբոսաշրջության բնագավառում օրենսդրությամբ նախատեսված որակավորման պայմանների ապահովման նկատմամբ հսկողության իրականացում,
- կզարգանան զբոսաշրջային ենթակառուցվածքները:

Հայաստան այցելող զբոսաշրջիկների թվաքանակի աճի ապահովումը կնպաստի արտարժույթի ներհոսքի ավելացմանը, բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը և կենսամակարդակի բարձրացմանը:

3. <u>Ստանդարտների մշակման ծառայություններ ծրագրի ռազմավարական նպատակները .</u>

2014 թվականի ոլորտի ռազմավարական նպատակն է՝

«Առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացման» համաձայնագրի պահանջների՝ ազգային ստանդարտների նե րդաշնակեցումը միջազգային և եվրոպական ստանդարտների հետ:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.Կմշակվեն միջազգային և եվրոպական ստանդարտներին ներդաշնակ շուրջ 95 ազգային ստանդարտներ:

2.Կիրականացվի համագործակցություն Ստանդարտացման միջազգային, եվրոպական և միջպետական կազմակերպությունն ե ր ի հետ:

3.Կշարունակվի Ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքները:

4. <u>Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ ծրագրի ռազմավարական նպատակները.</u>

2014 թվականի ոլորտի ռազմավարական նպատակներն են՝

• Հայաստանում ՏՀՏ կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համատարած կիրառվող էլեկտրոնային ծառայություններով, խոշորածավալ տեղական ՏՏ շուկայի առկայությամբ և առաջադեմ գիտելիքահենք արդյունաբերությամբ երկրի վարկանիշի ապահովումը,

• Մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ ու ծառայություններ մատուցող ընկերություններով, համաշխարհային շուկաներում մրցունակ տեղական ՏՏ արտադրանքով զարգացած տեղեկատվական տե խնոլոգիաների ոլորտի կայացումը,

• Համաշխարհային շուկայում մրցակցային առավելություններ ունեցող ,Հայկական ՏՏ ապրանքային նշանե-ի նե ր թափանցումն ու ներկայությունն ապահովող միջոցառումների իրականացումը,

• Հայկական ՏՀՏ ոլորտի մի շարք կարևոր բնագավառների աճը խթանելու նպատակով համապատասխան կրթությամբ

մասնագետների պատրաստման, որակյալ աշխատուժի աճի պահպանման և զարգացման խնդիրների լուծումը,

• Ոլորտի արդյունավետության աճի պահպանումը և առավել զարգացումը (մինչև տարեկան 15-20% չափով),

• Որակյալ աշխատուժի աճի պահպանումը և առավել զարգացումը (մինչև տարեկան 10-12% չափով):

5. Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագրի ռազմավարական նպատակները.

2014 թվականի ոլորտի ռազմավարական նպատակներն են՝

1) Ոչ պարենային արտադրանքների, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների՝ բացառությամբ հանրային սննդի կազմակերպություններում մատուցվող ծառայությունների) անվտանգության ապահովումը:

2) Սպառողների իրավունքների պաշտպանությունը:

3) Տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների խախտումների կանխարգելումը և վերացումը:

4) Պետական չափագիտական վերահսկողության ոլորտում չափագիտական կանոնների և նորմերի խախտումների բացահայտումը և դրանց կանխարգելումը և վերացումը, չափումների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

6. Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը ծրագրի ռազմավարական նպատակները.

Ծրագրի 2014թ ռազմավարության նպատակները ըստ ոլորտների հետևյալն են.

Զբոսաշրջության ոլորտում երկրի խթանման և մարքեթինգային ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ներգրավումը տարբեր աղբյուրներից՝ հիմնականում բյուջետային և միջազգային դոնոր կազմակերպություններից:

Ճշգրիտ վիճակագրական տվյալների հավաքագրման և այցելուների միջազգային տարեկան հետազոտության վերլուծության իրականացումը: Նոր զբոսաշրջային արդյունքների, ենթակառուցվածքների և զբոսաշրջության այլընտրանքային ուղղությունների ստեղծումն ու զարգացումը, զբոսաշրջային ուղեցույց նշանների մշակումն ու տեղադրումը, ինչպես նաև Համաշխարհային բանկի հե

տ համատեղ Հայաստանի տարածքային զբոսաշրջային զարգացման ծրագրերի մշակումը (Հարավային և Հյուսիսային միջանցքներ):

Առողջապահության ոլորտում առանձնապես կարևորվում է ռադիոիզոտոպների արտադրության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնի շահագործումը, ուռուցքային հիվանդությունների բուժման և կանխարգելման, ժամանակակից գիտատար տեխնոլոգիաներով հագեցած և բժշկագիտության արդի միջազգային զարգացմանը համապատասխան քիմիաթերապիայի և վիրաբուժության ուռուցքաբանական կենտրոնի նախագծանախահաշվային փաստաթղթերի և ճարտարապետաշինարարական նախագծի մշակումը, ինչպես նաև շինարարական աշխատանքների մեկնարկը:

Կրթության ոլորտում առանցքային խնդիրներից է շարունակում մնալ բարձրագույն կրթության համակարգի նպատակների շուրջ համընդհանուր հանրային փոխհամաձայնության բացակայությունը, առաջանցիկ ծրագրերի բացակայությունը և կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացի խիստ կենտրոնացված լինելը:

Բուհական համակարգի խնդիրներից է աշխատաշուկայի պահանջարկի և կոնկրետ հմտությունների տիրապետող շրջանավարտների անհամապատասխանությունը, ժամանակին համահունչ որակավորումներ ունեցող դասախոսների անբավարար քանակը, մասնագիտական տպագրությունների անհասանելիությունը և այլն:

Հանրային կապերի և ներդրողների/ դոնորների հետ հարաբերություններում 2014 թվականին կկազմակերպվեն միջոցառումներ՝ ուղղված Հայաստանում ներդրումային հնարավորությունների իրազեկվածության բարձրացմանը, ներդրումների և նվիրատվությունների ներգրավման գործընթացը, ինչի վերաբերյալ կիրականացվի ընդգրկուն և համահունչ գործունեություն:

7. <u>Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը ծրագրի ռազմավարական նպատակները.</u>

2014 թվականի ոլորտի ռազմավարական նպատակն է՝

ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ սահմանված երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը, վերամշակող արդյունաբերության ճյուղերի և համալիրների զարգացումը, արտահանման զարգացման ներուժ ունեցող ոլորտների հավասարակշռված և փուլային միջոցառումների իրականացումը, ինչպես նաև արդյունաբերության ոլորտի մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացումը:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներն իրենց մեջ ընդգրկում են.

1) հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման

միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում,

2) արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում,

3) շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում,

4) միջազգային սերտիֆիկացման և նորարարական դրամաշնորհներ,

5) միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում,

6) արտասահմանյան դիստրիբյուտորների և այլ օժանդակ կառույցների ներկայացուցիչների այցելություններ Հայաստան, գործարար կապերի հաստատում,

7) վերապատրաստման և/կամ ուսուցման դասընթացների մշակման և իրականացման ֆինանսավորում:

ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման 2014 թվականի ծրագիրն իրականացվելու է պետական և մասնավոր հատվածների սերտ համագործակցությամբ, համատեղ միջոցներով, որի շուրջ արդեն իսկ առկա են մի շարք պայմանավորվածություններ, մասնավորապես տեղական և միջազգային կազմակերպությունների հետ:

8 <u>Պետական աջակցություն ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի ստեղծում ծրագրի ռազմավարական նպատակներն են.</u>

1. ՀՀ-ում համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրման գործընթացի մեկ ընթացակարգով իրականացումը:

2. Հավատարմագրման ազգային մարմնի կայացում, միջազգային և եվրոպական նմանատիպ համակարգերին ինտեգրում:

3. Հավատարմագրման արդյունքների փոխճանաչման բազմակողմանի համաձայնագրերում հավատարմագրման մարմնի մասնակցություն:

9. <u>«ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարության պետական աջակցություն ծրագրի ռազմավարական նպատակներն են.</u>

Ծրագրի ռազմավարական նպատակն է նախանշել Հայաստանում տեսչական բարեփոխումների հիմնական ուղղությունները, որոնց իրականացումը կնպաստի տեսչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը: Ծրագիրը ֆիսկալ նպատակ չի հետապնդում, այսինքն տեսչության արդյունավետությունը չի չափվելու գանձված տուգանքների քանակով ու մեծությամբ:

10. «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացածթափոնների, մնացորդների և կորուստների չափերի փորձաքննություն» ծրագրի ռազմավարական նպատակները.

«Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափերի փորձաքննություն» ծրագրի ռազմավարական նպատակներն են՝

- «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» ռեժիմով ներմուծվող ապրանքի (հումքի, նյութերի և կիսաֆաբրիկատների) վերամշակման գործընթացի արդյունավետության բարձրացում՝ վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափերի կրճատում:
- տնտեսավարող սուբյեկտների կողմից ներմուծված ապրանքի վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափերի համապատասխանության ապահովում՝ ազգային, միջազգային ստանդարտներով կամ միջպետական ԳՈՍՏ-երով (ГОСТ-երով), տեխնիկական կանոնակարգերով սահմանված նորմերին և պահանջներին:
- Պետության շահերի պաշտպանություն:

11. Որակի ենթակառուցվածքների բարեփոխում ծրագրի ռազմավարական նպատակները.

2014 թվականի Որակի ենթակառուցվածքի ոլորտի ռազմավարական նպատակներն են՝

1) պետական ուղղակի աջակցության գործիքների միջոցով խթանել երկրում Որակի ենթակառուցվածքի զարգացմանը.

2) որակի ենթակառուցվածքի զարգացման ճանապարհով նպաստել երկրի, հատկապես նրա հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի տնտեսական զարգացմանը և անհամաչափությունների հաղթահարմանը.

3) որակի ենթակառուցվածքի ոլորտների պետական աջակցությանը նպատակաուղղված շրջանակների բազմազանեցումը, ինչպես նաև Որակի ենթակառուցվածքի ինստիտուտներին ցուցաբերվելիք պետական աջակցության նպատակայնության ու հասցեականության ապահովումը:

Չափորոշիչներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի

ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները

1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները

Ծրագրային դասիչը 1001 ԱԾ03	*Անվանումը՝* Տնտեսական զարգացման քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի, գնման և աջակցության ծառայություններ *Նկարագրություն* Քաղաքականության մշակման և դրա կատարման համակարգման, պետական ծրագրերի պլանավորման, մշակման, իրականացման և մոնիտորինգի (վերահսկման) ծառայություններ								
Քանակական	Իրավական ակտերի նախագծերի մշակում /փաստաթղթերի և/կամ ստանդարտների ընդհանուր թիվը/				1141	0.0	0.0	0.0	0.0
	Քաղաքականության փաստաթղթերի, ծրագրերի, հաշվետվությունների և վերլուծությունների պատրաստում /փաստաթղթերի ընդհանուր թիվը/				736	0.0	0.0	0.0	0.0
	Հանրային իրազեկում /միջոցառումների թիվը/				1063	0.0	0.0	0.0	0.0
	Քաղաքացիների ընդունելություն /մարդ/				1775	0.0	0.0	0.0	0.0
	Դիմումների և բողոքների ուսումնասիրում /թիվը/				510	0.0	0.0	0.0	0.0
	Միջազգային համագործակցություն /միջոցառումների թիվը/				181	0.0	0.0	0.0	0.0
	Միջգերատեսչական խորհրդատվություն և համագործակցություն /միջոցառումների թիվը/				260	0.0	0.0	0.0	0.0
	Ուղղակի ծառայություններ հանրությանը. Այլ կազմակերպություններին խորհրդատվության տրամադրում /կազմակերպությունների քանակը/				5100	0.0	0.0	0.0	0.0
	Ծրագրերի կառավարում/համակարգում, վերահսկողություն և մոնիտորինգ (ծրագիր)				100	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	888,516.8

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1001 Պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Ծրագիրը նպաստում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող ծրագրերի գծով նախատեսված արդյունքների ապահովմանը

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

ՀՀ էկոնոմիկայի նախարարության

Ծրագրային դասիչը 1128 ԱԾ02	*Անվանումը՝* ԱՀԿ-ում և Օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործում *Նկարագրություն* ԱՀԿ-ում ՀՀ տնտեսական շահերի ներկայացում և պաշտպանություն, ՀՀ առևտրատնտեսական քաղաքականության զարգացմանը, արտահանումների խթանմանը և ներդրումների ներգրավմանն ուղղված գործունեություն արտերկրում:

Քանակական	Արտերկրում ՀՀ առևտրային ներկայացուցիչների քանակը				2	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	108,148.4

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1128 Արտաքին քաղաքականության իրականացում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Երկրի միջազգային ներգրավվածության աստիճանի, միջազգային հեղինակության ամրապնդում, արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Չափորոշիչներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ԱՀԿ - ում և Եվրամիության երկրներում ՀՀ առևտրական ներկայացուցիչներ								

Չափորոշիչներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի

ՄԱՍ Գ: Նախարարի պատասխանատվության ներքո իրականացվող քաղաքականության միջոցառումների և ֆինանսական կառավարման արդյունքների ցուցանիշները

1.Քաղաքականության միջոցառումներ

1.1 Ծառայություններ

Ծրագրային դասիչը 1018 ԱԾ13	*Անվանումը՝* Պետական աջակցություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարությանը *Նկարագրություն* Տեսչություններում ներդրված ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի կատարելագործում, տեսչական համակարգի օպտիմալացման ծրագրի իրականացում և տեսչություններում տվյալների փոխանակման և կառավարման էլեկտրոնային համակարգերի մշակում և ներդրում								
Քանակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	10,700.0
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1018 Պետական աջակցություն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքո գործող տեսչական բարեփոխումների քարտուղարությանը									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Տեսչական բարեփոխումների ծրագրով նախատեսված գործառույթների ապահովում									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը									

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն									
Ծրագրային դասիչը 1043 ԱԾ01	*Անվանումը՝* Հայաստանի ՏՏ ոլորտի մրցունակության բարձրացում. Հայաստանում վարկանիշի ձևավորում որպես ՏՏ տարածաշրջանային կենտրոն *Նկարագրություն* Միջոցառման շրջանակում նախատեսվում է իրականացնել ոլորտի ներկայացումն արտերկրում և Հայաստանում, ՏՏ ոլորտում հաջողությունների հասած երկրների և համապատասխան միջազգային կառույցների հետ համագործակցության խթանումն ու ապահովումը, միջազգային ՏՏ կազմակերպություններին անդամակցումը, միջազգային ընկերությունների հետ կառավարության և/կամ մասնավոր հատվածի մակարդակով համատեղ ներդրումային և կրթական ծրագրերի մշակում և իրականացում:								
Քանակական	Ներդրումային ծրագրերի քանակ				5	0.0	0.0	0.0	0.0
	Միջազգային և տեղական միջոցառումների քանակը				10	0.0	0.0	0.0	0.0
	Հետազոտությունների իրականացում				1	0.0	0.0	0.0	0.0
	ՏՏ ոլորտում մրցույթների անցկացում				2	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	80,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման պետական աջակցություն

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Երկրում գիտելիքահենք տնտեսության ձևավորում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ծրագրային դասիչը 1067 ԱԾ01	*Անվանումը՝* Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ *Նկարագրություն* Արտադրանքի և ծառայությունների գծով ազգային ստանդարտների մշակում, միջպետական, եվրոպական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցություն և ստանդարտացման աշխատանքների կազմակերպում և ստանդարտների ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների իրականացում								
Քանակական	Մշակված ստանդարտներ				95	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Միջազգային չափանիշներին համապատասխանելիություն					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	տարի				1	0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	14,300.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1067 Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Միջազգային ստանդարտներին ներդաշնակ թվով 95 ազգային գործող ստանդարտներ

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ

Ծրագրային դասիչը 1067 ԱԾ03	*Անվանումը՝* Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության պետական ծրագիր

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Տեխնիկական կանոնակարգի պահանջների և չափագիտական կանոնների ու նորմերի պահպանման վերահսկողության ժամանակ արտադրանքի համապատասխանելիությունը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին որոշելու նպատակով իրականացվում է արտադրանքի փորձանմուշների ձեռքբերում (գնման միջոցով) և դրանց փորձարկումները հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներում:								
Քանակական	Ստուգումների (ուսումնասիրությունների) թիվը				300	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ				1	0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	30,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1067 Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Տեխնիկական կանոնակարգի պահանջներին և չափագիտական կանոններին ու նորմերին համապատասխան արտադրանքի մատակարարման և ծառայությունների մատուցման ապահովման վերահսկողություն

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

ՀՀ էկոնոմիկայի նախարարության Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչություն

Ծրագրային դասիչը 1067 ԱԾ04	*Անվանումը՝* Թափոնների, մնացորդների և կորուստների չափերի փորձաքննություն *Նկարագրություն* Հայտատուների կողմից ներկայացված ապրանքների վերամշակման արդյունքում գոյացած թափոնների և կորուստների չափերի փորձաքննություն								
Քանակական	Փորձաքննություն				5	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ժամկետայնության	տարի				1	0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	900.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1067 Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Փորձաքննության արդյունքում ժամանակավոր ներմուծում վերամշակման համար ռեժիմով ներմուծված ապրանքների վերամշակումից գոյացած թափոնների, մնացորդների և կորուստների չափերի ճշրտում

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված փորձարկման լաբորատորիաներ ունեցող գիտահետազոտական կազմակերպություններ

Ծրագրային դասիչը 1067 ԱԾ05	*Անվանումը՝* Որակի ենթակառուցվածքների բարեփոխում *Նկարագրություն* Ազգային որակի ենթակառուցվածքի զարգացման հեռանկարային ուղղվածության ապահովում և գոյություն ունեցող համակարգերի համապատասխանեցում միջազգային և եվրոպական պահանջներին								
Քանակական	Միջազգային չափանիշներից բխող ստանդարտների ներդաշնակեցում				150	0.0	0.0	0.0	0.0
Քանակական	Գործող 10 տեխնիկական կանոնակարգերի վերանայում՝ համապատասխանության գնահատման ընթացակարգերի մոտարկման տեսանկյունից				10	0.0	0.0	0.0	0.0
	2 տեխնիկական կանոնակարգերի ամբողջական մոտարկում միջազգային պահանջներին				2	0.0	0.0	0.0	0.0
	Ուսուցողաճանաչողական սեմինարի կազմակերպում՝ կատարված աշխատանքի ներկայացում (տեղական կառավարման և համապատասխանության գնահատման մարմինների և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներին, բիզնես միջավայրի ներկայացուցիչներին)				2	0.0	0.0	0.0	0.0
	Տեխնիկական կանոնակարգման գործընթացի կայացման համար անհրաժեշտ դասընթացների և վերապատրաստման մասնակցություն				2	0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Քանակական	Էտալոնային համակարգերի տեխնիկական սպասարկում				4	0.0	0.0	0.0	0.0
	KOOMET-ի անդամ երկրների չափագիտական ինստիտուտներում տրամաչափարկման աշխատանքների կատարում				30	0.0	0.0	0.0	0.0
	Սարքավորումների և համակարգերի ձեռքբերում՝ ֆիզիկաքիմիական չափումների և բժշկական նշանակության սարքերի ստուգաչափման և տրամաչափարկման համար				15	0.0	0.0	0.0	0.0
Քանակական	Տեսչության՝ խաղալիքների և պլաստմասե իրերի փորձարկման լաբորատորիայի ձեռք բերում				1	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ-ում հավատարմագրման ազգային մարմնի կայացում, եվրոպական/միջազգային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցության պայմանների ապահովում, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ վստահության ապահովում:				1	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	200,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1067 Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Միջազգային չափանիշներին համապատասխան որակի ենթակառուցվածքների բարեփոխում, ինչի արդյունքում ՀՀ ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգման, հավատարմագրման, չափագիտության համակարգերը կհամապատասխանեն միջազգային չափանիշներին, ինչպես նաև կապահովվի նշված համակարգերի փոխճանաչման գործընթացի մեկնարկը:

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Ստանդարտների ազգային ինստիտուտ ՓԲԸ, Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ, Հավատարմագրման ազգային մարմին ՊՈԱԿ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Ծրագրային դասիչը 1081 ԱԾ05	*Անվանումը՝* Գրադարանային ծառայություններ (տնտեսական զարգացման ոլորտ)

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Գրադարանային հավաքածուների պահպանում և համալրում, ընթերցողների սպասարկում, գրադարանային միջոցառումների կազմակերպում								
Քանակական	Ձեռք բերված գիտատեխնիկական նոր գրականություն (օրինակ)				600	0.0	0.0	0.0	0.0
	Համալրված էլեկտրոնային քարտարան (գրառում)				14000	0.0	0.0	0.0	0.0
	Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում (տացք)				150000	0.0	0.0	0.0	0.0
	Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուներ				140	0.0	0.0	0.0	0.0
	Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր (թիվը)				30	0.0	0.0	0.0	0.0
	Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ (թիվը)				15	0.0	0.0	0.0	0.0
	Նոր գրականության ցուցահանդես (ցուցահանդես)				40	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Ձեռքբերված, մշակված, սպասարկված գրականություն, կազմակերպված վերապատրաստման դասընթացներ, նոր տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների կիրառմամբ օպերատիվ տեղեկատվությամբ սպասարկված, միջազգային էլեկտրոնային գիտատեխնիկական ռեսուրսներից օգտված գիտատեխնիկական հանրություն և կառավարման օրգաններ, բիզնես-միջավայրի ներկայացուցիչներ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Ամբողջ տարվա ընթացքում					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	137,964.9

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1081 Գրադարանային ծառայությունների ծրագիր

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Բնակչության կրթական մակարդակի և իրազեկվածության բարձրացում՝ նպաստելով ԿԶԾ կրթական նպատակների իրագործմանը, հանրապետության գիտական, տեխնիկական և մշակութային ներուժի զարգացմանը

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը									
«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ									
Ծրագրային դասիչը 1104 ԱԾ01	*Անվանումը՝* ՓՄՁ-ի սուբյեկտներին տեխնիկական և ֆինանսական աջակցության ցուցաբերում *Նկարագրություն* ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրում, ապրանքների (ծառայությունների) արտահանում և շուկաներում առաջ մղում, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն, գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն Երևանում և ՀՀ մարզերում գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին, որից շուրջ 90%-ը ՀՀ մարզերում								
Քանակական	Աջակցություն սկսնակ գործարարներին (դասընթաց)				300	0.0	0.0	0.0	0.0
	Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն				300	0.0	0.0	0.0	0.0
	Վարկային երաշխավորությունների տրամադրում գործող ՓՄՁ սուբյեկտներին				50	0.0	0.0	0.0	0.0
	Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն				14000	0.0	0.0	0.0	0.0
	Ուսուցողական աջակցություն				500	0.0	0.0	0.0	0.0
	Կանանց ձեռներեցության զարգացման ծրագիր				250	0.0	0.0	0.0	0.0
	Ոլորտային աջակցության ծրագրեր				250	0.0	0.0	0.0	0.0
	Ձեռնարկությունների եվրոպական ցանցի գործարար համագործակցության հիմնապաշարում տեղակայված ՓՄՁ սուբյեկտներ				100	0.0	0.0	0.0	0.0
	Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում այլ աջակցություն				200	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության						0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	151,983.7
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցություն									
Վերջնական արդյունքի նկարագրությունը Երկրի ՀՆԱ-ում ՓՄՁ-ի սուբյեկտների տեսակարար կշռի հետագա ավելացում, ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնում, ՓՄՁ-ի սուբյեկտների գործունեության շրջանակների ընդլայնում և նրանց մրցունակության բարձրացում, նրանց կողմից թողարկվող արտադրանքի(մատուցվող ծառայությունների) տեսականու ընդլայնում և դրանց բազմազանեցում, նոր ապրանքատեսակների արտադրության և ծառայությունների մատուցման քանակական ու որակական աճ և դրանց արտահանման ծավալների ավելացում, սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցության ցուցաբերում, ՓՄՁ-ի սուբյեկտների թվաքանակի ավելացում և նրանց հաշվին նոր աշխատատեղերի ստեղծում, այդ թվում ՀՀ մարզերում, և այդ նպատակով ցուցաբերվող պետական աջակցության շուրջ 90%-ի ուղղորդում այդտեղ գործող և սկսնակ ՓՄՁ-ի սուբյեկտներին:								
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ									
Ծրագրային դասիչը 1162 ԱԾ09	*Անվանումը՝* Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում *Նկարագրություն* Գիտական և գիտատեխնիկական լաբորատորիաների պահպանում և զարգացում, լաբորատորիաների տարածքի և սարքավորման տրամադրում հետազոտողներին								
Քանակական	Գիտական և գիտատեխնիկական լաբորատորիաների պահպանում և զարգացում իրականացնող կազմակերպությունների թիվը				1	0.0	0.0	0.0	0.0
						0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	50,000.0
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1162 Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների և մշակումների ծառայություններ									

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Վերջնական արդյունքի նկարագրությունը Գիտատեխնիկական կարևոր ոլորտների և գիտական ներուժի զարգացում, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում									
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Չափագիտության» ազգային ինստիտուտ ՓԲԸ									
Ծրագրային դասիչը 1165 ԱԾ01	*Անվանումը՝* Զբոսաշրջության աջակցության ծառայություններ *Նկարագրություն* Ծրագրով նախատեսված են միջոցառումներ ուղղված 1.միջազգային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը, 2. դեպի Հայաստան զբոսաշրջային հոսքերի շարունակական ավելացմանը,3.համայնքներում զբոսաշրջության զարգացմանը,4. համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի ինտեգրմանը								
Քանակական	գովազդատեղեկատվական նյութեր (հատ)				3600	0.0	0.0	0.0	0.0
	մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների				4	0.0	0.0	0.0	0.0
	օտարերկրյա լրատվամիջոցների Հայաստան ճանաչողական այց				20	0.0	0.0	0.0	0.0
	ավանդական տոնակատարություններ և փառատոններ (քանակ)				7	0.0	0.0	0.0	0.0
	www.armeniainfo.am մասնագիտացված կայքի գործողություն, թարմացում				1	0.0	0.0	0.0	0.0
	տեղեկատվական կենտրոնների հիմնադրում և գործունեության ապահովում				3	0.0	0.0	0.0	0.0
	Երևանում զբոսավարների միջազգային կրթական կենտրոնի հիմնում և գործունեության ապահովում				1	0.0	0.0	0.0	0.0
	հուշանվերների և տեղական այլ արտադրանքի վաճառքի համար օրինակելի տաղավարի ստեղծում				1	0.0	0.0	0.0	0.0
	ՀՀ մարզերում սեմինարներ կազմակերպում ուղղված զբոսաշրջային տների (B&B) համակարգի ձևավորմանն ու զարգացմանը				2	0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորում				6	0.0	0.0	0.0	0.0
	որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտների պարբերական գնահատում				3	0.0	0.0	0.0	0.0
	ԱՊՀ-ում 2014 թվականը Զբոսաշրջության տարի միջոցառման կազմակերպում և անցկացում				1	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	75,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ»

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Հայաստանում կձևավորվի ժամանակակից և մրցունակ զբոսաշրջային արդյունք, կկատարելագործվի Հայաստանը զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկիր» նկարագիրը, կիրականացվի Հայաստանի ինտեգրումը միջազգային զբոսաշրջային շուկա, կապահովվի միջազգային ներգնա զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճ 10 %-ի չափով:

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ և մրցութային կարգով ընտրված կազմակերպություններ

Ծրագրային դասիչը 1165 ԱԾ02	*Անվանումը՝* Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմանդրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը *Նկարագրություն* 2014 թվականին Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հիմնական գրասենյակը համակարգելու է զբոսաշրջության, առողջապահության, կրթության, հասարակայնության և ՁԼՄ-ների հետ կապերի, ֆոնդահայթհայթման և աշխատանքային հանձնաժողովների ոլորտները, ինչպես նաև իրականացնելու է ֆինանսական, իրավաբանական և աշխատակազմի կարգավորման գործընթացները:

Քանակական	Տաթև զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրի մշակում համակարգում և իրականացում				6	0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Զբոսաշրջության խթանման ծրագրեր, այդ թվում՝				6	0.0	0.0	0.0	0.0
	Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների				3	0.0	0.0	0.0	0.0
	Ճանաչողական այցերի կազմակերպում				3	0.0	0.0	0.0	0.0
	Հայաստանը ներկայացնող բազմալեզու գովազդա տեղեկատվական նյութերի տպագրություն				5000	0.0	0.0	0.0	0.0
	Առողջապահության ծրագրերի իրականացում, այդ թվում՝				4	0.0	0.0	0.0	0.0
	Ուռուցքաբանության Գերազանցության Հայկական Կենտրոնի ծրագրի իրականացման աշխատանքների կազմակերպում և համակարգում				2	0.0	0.0	0.0	0.0
	Միջուկային սրտաբանության ծրագրերի պլանավորում, կազմակերպում և իրականացում				2	0.0	0.0	0.0	0.0
	ՀԱՄՀ հանրային իրազեկման և շահառուների հետ հաղորդակցության ապահովում և ֆոնդահայթայթում				7	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	260,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

Պետական աջակցություն Հայաստանի ազգային մրցունակության հիմանդրամի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանը

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Հիմնադրամը գործում է պետական-մասնավոր համագործակցության սկզբունքով՝ ներգրավելով ռազմավարական նշանակության ներդրումներ, որոնց շնորհիվ հնարավոր կդառնա զարգացնել ազգային մրցունակությունը

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամ

Ծրագրային դասիչը	*Անվանումը՝*
1165 ԱԾ03	Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
	Նկարագրություն Երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորում՝ ձեռնարկությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի անընդհատ արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման միջոցով, տնտեսության արդյունաբերական ոլորտի արտահանելի հատվածի ընդլայնման խթանում, Գյումրի քաղաքի սոցիալ-տնտեսական և բիզնես միջավայրի զարգացման նախադրյալների ստեղծում, բարձրտեխնոլոգիական աշխատատեղերի ստեղծում, համապատասխան կրթական ծրագրերի միջոցով մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացում:								
Քանակական	Շնորհանդեսների կազմակերպում և/կամ մասնայցություն				10	0.0	0.0	0.0	0.0
	Վարկավորման սուբսիդավորում				5	0.0	0.0	0.0	0.0
	Հետազոտությունների իրականացում				1	0.0	0.0	0.0	0.0
	Միջազգային սերտիֆիկացման համաֆինանսավորում				10	0.0	0.0	0.0	0.0
	Դիստրիբյուտորների Հայաստան այցելությունների կազմակերպում				60	0.0	0.0	0.0	0.0
	Տնտեսվարող սուբյեկտների միջազգային ցուցահանդեսներին մասնակցության աջակցություն				30	0.0	0.0	0.0	0.0
	Վերապատրաստման դասընթացների կազմակերպում				5	0.0	0.0	0.0	0.0
	Արդյունաբերության զարգացմանն աջակցության ծրագրերի կառավարում և համակարգում				1	0.0	0.0	0.0	0.0
	Գյումրու Տեխնոպարկի կառավարում՝ այդ թվում				1	0.0	0.0	0.0	0.0
	Մասնագետների պատրաստում և վերապատրաստում				մինչև 1000	0.0	0.0	0.0	0.0
	Ընկերություններին և թիմերին բիզնես աջակցություն և խորհրդատվություն				մինչև 200	0.0	0.0	0.0	0.0
	Նորաստեղծ ընկերությունների ձևավորում կամ ներգրավում				3	0.0	0.0	0.0	0.0
Որակական	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Ժամկետայնության	Մշակված չէ					0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	569,726.8

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

Պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացմանը

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Արդյունաբերական արտադրանքի արտահանման դիվերսիֆիկացում և ծավալների ավելացում:

Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը

Արդյունաբերության զարգացման հիմնադրամ

Ծրագրային դասիչը 1167 ԱԾ02	*Անվանումը՝* Պետական աջակցություն ,ՀՀ հավատարմագրման համակարգի բարեփոխում և Հավատարմագրման ազգային մարմնի ստեղծումե ծրագրի իրականացմանը *Նկարագրություն* Միջազգային չափանիշներին համապատասխան հավատարմագրման ծառայությունների մատուցում, հավատարմագրման համակարգի բարեփոխում և ազգային մարմնի կայացում, հավատարմագրման գործընթացում ընդգրկված անձնակազմի ուսուցում, հավատարմագրման ազգային մարմնի կայքէջի և հավատարմագրված անձանց տվյալների շտեմարանի ստեղծում, հավատարմագրման ազգային մարմնի մասնակցություն աշխատաժողովներին և հանդիպումներին

Քանակական	Հավատարմագրված լաբորատորիաներ և մարմիններ				7	0.0	0.0	0.0	0.0
Որակական	ՀՍՏ ԻՍՕ 17025 և ՀՍՏ ԻՍՕ 17065 ստանդարտներին համապատասխան թվով 7 հավատարմագրված լաբորատորիաներ և մարմիններ					0.0	0.0	0.0	0.0
Ժամկետայնության	Մշակված չէ				1	0.0	0.0	0.0	0.0
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0.0	0.0	0.0	13,906.7

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

1067 Ստանդարտացման, չափումների միասնականության նորմերի և տեխնիկական կանոնակարգերի մշակման և վերահսկման ծառայություններ

Չափորոշիչներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
Վերջնական արդյունքի նկարագրությունը ՀՀ-ում հավատարմագրման ազգային մարմնի կայացում, եվրոպական/միջազգային հավատարմագրման կազմակերպություններին անդամակցության պայմանների ապահովում, հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ վստահության ապահովում:								
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ								

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՄԱՍ Ա: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արտաքին գործերի նախարարության ռազմավարական նպատակները 2014թ.

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության նպատակներն են՝ միջազգային ասպարեզում պետության շահերի պաշտպանությունը, արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդումը, տարածաշրջանային կայունության, անվտանգության և զարգացման ապահովումը, տնտեսական զարգացման համար անհրաժեշտ արտաքին բարենպաստ պայմանների ու երաշխիքների ստեղծումը, տարածաշրջանային և միջազգային գործընթացներում Հայաստանի Հանրապետության ներգրավվածության և դիրքերի ամրապնդումը:

Նշված նպատակներին հասնելու համար Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն են հանդիսանում.

- Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նորմերի, մասնավորապես, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի հիման վրա,
- սփյուռքի հետ համատեղ ջանքերի գործադրմամբ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի նախաշեմին Հայոց ցեղասպանության՝ որպես մարդկության դեմ գործած ոճիրի միջազգային ճանաչումը, դատապարտումը, ժխտման բացառումը և հետևանքների վերացումը,
- միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության հեղինակության և դրական վարկանիշի ամրապնդումը,
- միջազգային տնտեսական համագործակցության գործընթացներում ներգրավվածության ընդլայնումը, արտաքին տնտեսական կապերի ամրապնդումը, Հայաստանի Հանրապետությունում ներդրումների խրախուսման աջակցությունը, ինչպես նաև արտաքին աշխարհին կապող տրանսպորտային ուղիների բազմազանեցման, էներգակիրների տեղափոխման միջոցների անխափան գործարկման, արտաքին առևտրի համար նպաստավոր պայմանների ապահովման, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնման և այդ շուկաներում ներգրավվածության, արտաքին ներդրումների և նոր տեխնոլոգիաների ու հմտությունների ներմուծման հարցերը,
- արտերկրում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանությունը,
- երկկողմ և միջազգային հարթություններում մշակութային համագործակցության խթանումը,
- հայկական մշակութային ժառանգության պահպանումը, այդ թվում՝ արտերկրում դրա պահպանման աջակցությունը:

Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է լինելու՝

- Ռուսաստանի Դաշնության հետ Հայաստանի դաշնակցային, ռազմավարական գործընկերության առավել ամրապնդմանն ու խորացմանը,
- Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ բարեկամական գործընկերության զարգացմանն ու ընդլայնմանը,
- Եվրամիության հետ մերձեցման քաղաքականության շարունակմանը,
- եվրոպական պետությունների հետ հարաբերությունների առավել ամրապնդմանը,
- անմիջական հարևանների՝ Վրաստանի և Իրանի Իսլամական Հանրապետության հետ, հարաբերությունների շարունակական զարգացմանը,
- Հայաստան-Թուրքիա հարաբերությունների՝ առանց նախապայմանների կարգավորման քաղաքական ուղեգծի շարունակմանը,
- ԱՊՀ տարածքում ինտեգրացիոն գործընթացներին ակտիվ մասնակցության շարունակմանը, ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի և գործակցության խորացմանը,
- Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի և Ասիայի այլ երկրների, Մերձավոր Արևելքի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Աֆրիկայի պետությունների հետ համագործակցության ընդլայնմանը:

Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է լինելու իր ռազմաքաղաքական անվտանգության կարևոր բաղադրիչ հանդիսացող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունում (ՀԱՊԿ) ակտիվ ներգրավվածությանը:

Հետևողական կերպով շարունակվելու է ակտիվ ներգրավվածությունը Միավորված ազգերի կազմակերպությունում (ՄԱԿ), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունում (ԵԱՀԿ), Եվրոպայի խորհրդում (ԵԽ), Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում (ՍԾՏՀԿ), Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում և այլ միջազգային կառույցներում:

ՀՀ ԱԳՆ-ի կողմից 2014թ. մատուցվելիք ծառայություններում կատարվող փոփոխությունները, ներառյալ այն ծառայությունները, որոնք աջակցում են հիմնական գերակա վերջնական արդյունքների նվաճմանը

- ՀՀ արտաքին քաղաքականության տեղեկատվական և քարոզչական բաղադրիչի ամրապնդում, ԱԳՆ գործունեության լուսաբանման, տեղեկատվության տրամադրման օպերատիվության և արդյունավետության բարձրացում,

- ՀՀ դիվանագիտական կադրերի պատրաստման եւ վերապատրաստման ծառայությունների իրականացմանը նպատակաուղղված ԱԳՆ-ին կից գործող դիվանագիտական դպրոցի հնարավորությունների ընդլայնում,

- ԱԳՆ համակագի անհրաժեշտ տեխնիկական վերազինում,

- ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ներկայացվածության աշխարհագրական ընդլայնում:

Չափորոշիչներ		Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
		Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի	Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի

ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները

1. Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները

Ծրագրային դասիչը 1001 ԱԾ04	*Անվանումը՝* Արտաքին հարաբերությունների ոլորտում պետական քաղաքականության մշակում և ծառայությունների մատուցում *Նկարագրություն* ՀՀ Նախագահի ընդհանուր ղեկավարությամբ արտաքին գործերի բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականության մշակումը եւ իրականացնումը, ԱԳՆ-ին վերապահված լիազորությունների շրջանակում դիվանագիտական ծառայության կազմակերպում եւ ղեկավարում								
